# ՀՈՐԻԶՈՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

horizon | HÉBDOMADAIRE ARMÉNIEN – Supplément en français | ARMENIAN WEEKLY – English supplement

VOL. 48 / No. 4-5 (2452-2453), 8+4+4+16 էջ

29 ՅՈՒՆԻՍ-6 ՅՈՒԼԻՍ / 29 JUIN-6 JUILLET / JUNE 29-JULY 6, 2026



KOMITAS
SALON FUNÉRAIRE
Entrusted for over 25 years
Journey Home™ coverage included with
new pre-arrangement contracts* ($595 value)
www.komitas.ca (514) 331-0400


## Խմբագրական
## Պարտութեան «խաղաղութիւնը»

Հայաստանի վերջին ընտրութիւնները սովորական ընտրապայքարի սահմաններէն դուրս էին։ Հարցը այլեւս իշխանութիւն փոխելու կամ պահելու հոլովոյթը չէր միայն. խնդրոյ առարկան այն էր, թէ Հայաստան ինչպիսի՛ ուղիով պիտի ընթանայ, եւ ի՛նչ պիտի մնայ պետականութենէն, եթէ պարտութիւնը՝ «խաղաղութեան», իսկ զիջողականութիւնը՝ «պետական իմաստութեան» անուան տակ շարունակուի պարտադրուիլ ժողովուրդին։

Նիկոլ Փաշինեանի իշխանութեան օրով «խաղաղութիւն» բառը դատարկուած է իր բովանդակութենէն։ Այն այլեւս անվտանգութեան երաշխիք չէ, այլ՝ քաղաքական չանտաժի գործիք։ Ժողովուրդին կը պարտադրուի լռել, չհարցականել ու չդիմադրել, որովհետեւ ամէն առարկութիւն կը ներկայացուի իբրեւ պատերազմի դրդապատճառ։ Արցախի մասին խօսիլը վտանգաբեր կը նկատուի, ազգային արժանապատուութիւնը կը պիտակաւորուի իբրեւ արկածախնդրութիւն, իսկ զիջումներուն դէմ կանգնիլը՝ իբրեւ «ռեւանշիզմ»։

Աւելի մտահոգիչն այն է, որ Երեւանի իշխանութեան բառամթերքը օր ըստ օրէ կը նոյնանայ Պաքուի հռետորաբանութեան հետ։ Երբ Ատրպէյճան ընդդիմութիւնը «ռեւանշիստ» կը կոչէ, նոյն որակումը քիչ անց կը հնչէ ՔՊ-ականներու բերնով։ Երբ Պաքու կը փորձէ փակուած յայտարարել Արցախի հարցը, Երեւանէն նոյն տրամաբանութիւնը սպասարկող արտայայտութիւններ կը լսուին։ Ալիեւ կը սպառնայ, իսկ Փաշինեան այդ սպառնալիքը ներքաղաքական գործիքի վերածելով՝ զայն կը մատուցէ իբրեւ անխուսափելի իրողութիւն։

Այս ամբողջ ընթացքը պատահական չէ։ 2020-էն ետք Ատրպէյճան Հայաստանի մէջ տեսած է այնպիսի իշխանութիւն մը, որ պատրաստ է պարտութիւնը հիմնաւորելու, զիջումը արդարացնելու եւ ազգային դիմադրողականութիւնը ջախջախելու։ Նոյն այս «նոր իրողութիւններու» մթնոլորտին մէջ է, որ Պաքուն սկսած է բացայայտօրէն առաջ մղել այսպէս կոչուած «Արեւմտեան Ատրպէյճան»-ի թեզը։ Համաժողովներ, փառատօներ, պետական ֆինանսաւորում, «վերադարձի» պահանջներ. այս բոլորը այլեւս քարոզչական պատահականութիւններ չեն, այլ՝ պետական օրակարգի անբաժան բաղադրիչներ։

Մինչդեռ Հայաստանի իշխանութիւնը կը շարունակէ ժողովուրդը համոզել, թէ վտանգը չափազանցուած է, կամ թէ այդ թեմաները ընդդիմութեան կողմէ սերմանուած վախեր են։ Բայց երբ Ատրպէյճան պետական մակարդակով կը խօսի Հայաստանի տարածք «վերադառնալու» մասին, իսկ Երեւանի իշխանութիւնը համահունչ խստութեամբ չի հակազդեր, հարցը այլեւս պարզապէս քարոզչութեան չի վերաբերիր. խնդիրը պետական կամքի բացակայութիւնն է։

Վերջին տարիներուն Հայաստանի կորուստները միայն տարածքային չեն եղած։ Սեղմուած է ոչ միայն քարտէսը, այլեւ՝ պետական մտածողութեան հորիզոնը։

Նախ բռնագրաւուեցաւ Արցախի մէկ մասը, յետոյ՝ ամբողջ Արցախը, ապա հարուածի տակ դրուեցան Հայաստանի սահմանները։ Այսօր վտանգը աւելի մեծ է, որովհետեւ փորձ կը կատարուի խաթարելու նաեւ Հայաստանի ներքին էութիւնը՝ յիշողութիւնը, ինքնութիւնը, դիմադրութեան ոգին եւ ապագայի տեսլականը։

Ահա թէ ինչո՛ւ Փաշինեանի «խաղաղութեան դարաշրջանը» խաղաղութեան ծրագիր չէ, այլ՝ նորանոր զիջումներու քաղաքական նախապատրաստութիւն։ Պատերազմի վտանգը ժողովուրդի դիմադրութեան մէջ չէ. նոր կորուստներու իրական աղբիւրը այն իշխանութիւնն է, որ թշնամիին սպառնալիքը կը վերածէ ներքին հնազանդութեան գործիքի եւ պարտութիւնը կը ներկայացնէ իբրեւ խաղաղութիւն։

## Միաւորուող ընդդիմութեան օրակարգին վրայ՝ կեղծուած ընտրութիւններու հարցը եւ նոր զիջումներու կանխումը



Կեղծուած ընտրութիւններու հարցը եւ Հայաստանի կողմէ հնարաւոր նոր տարածքային զիջումներու կանխումը պիտի ըլլան միաւորուող ընդդիմութեան գլխաւոր օրակարգային կէտերը, «Ազատութիւն» ձայնասփիւռին յայտնեց «Հայաստան» դաշինքի անդամ, ՀՅԴ Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան։

Ընդդիմադիր ուժերու համախմբման մասին նախապէս յայտարարած էր «Ուժեղ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Սամուէլ Կարապետեան՝ նշելով, որ հայրենիքի ապագայով մտահոգ ընդդիմադիր ուժերը պէտք է միանան եւ ձեւաւորեն յետընտրական ընդդիմադիր համագործակցութեան նոր հարթակ։ Սաղաթէլեան ողջունեց նախաձեռնութիւնը՝ ընդգծելով, որ «Հայաստան» դաշինքը վաղուց նման համագործակցութեան անհրաժեշտութեան մասին խօսած է։ Անոր համաձայն, քննարկումներու ընթացքին պիտի յստականայ, թէ նոր ձեւաչափը պիտի ըլլայ ընդդիմադիր կոալիցի՞ա, կոմիտէ՞, թէ այլ կառոյց, սակայն գլխաւոր նպատակը ընդդիմադիր ուժերու համադրուած աշխատանքն է յետընտրական փուլին մէջ։ Սաղաթէլեանի խօսքով, ընդդիմութիւնը կը պատրաստուի դիմել Սահմանադրական Դատարան՝ ընտրական խախտումներու վերաբերեալ փաստերով եւ օրինակներով հիմնաւորուած փաթեթ ներկայացնելով։ Ան նաեւ չբացառեց, որ այդ ընթացքին տեղի ունենան բողոքի գործողութիւններ։ Անդրադառնալով Սահմանադրական Դատարանի դերակատարութեան՝ Սաղաթէլեան նշեց, որ դատարանը պէտք է ընտրութիւն կատարէ՝ կա՛մ առաջնորդուիլ Սահմանադրութեամբ եւ արձանագրել խախտումները, կա՛մ դառնալ գործող իշխանութեան կցորդը։

## Եօթ քաղաքական ուժեր դիմեցին Սահմանադրական Դատարան՝ վիճարկելով ընտրութիւններուն արդիւնքները

Եօթ քաղաքական ուժեր դիմեցին Սահմանադրական Դատարան՝ վիճարկելով յունիս 7-ի խորհրդարանական ընտրութիւններուն արդիւնքները եւ պահանջելով զանոնք անվաւեր ճանչնալ։ Դիմողներուն մէջ են խորհրդարան անցած «Ուժեղ Հայաստան» եւ «Հայաստան» դաշինքները, ինչպէս նաեւ խորհրդարանէն դուրս մնացած հինգ ուժեր։

Կեդրոնական ընտրական յանձնաժողովի հրապարակած արդիւնքներուն համաձայն՝ Ազգային ժողովին մէջ Քաղաքացիական Պայմանագիրը ստացած է 64 աթոռ, «Ուժեղ Հայաստան»-ը՝ 29, իսկ «Հայաստան» դաշինքը՝ 12։

Դիմող ուժերը կը մատնանշեն վարչական միջոցներու չարաշահում, հանրային լրատուամիջոցներու անհաւասար օգտագործում, ատելութեան խօսք, ընտրակաշառքի վերաբերեալ պնդումներ եւ երեք ընտրատեղամասերու մէջ վերաքուէարկութիւն չկազմակերպելու մասին Կեդրոնական ընտրական յանձնաժողովի խնդրայարոյց որոշումը։

Սահմանադրական Դատարանը պարտաւոր է որոշում կայացնել դիմումի մուտքագրման օրէն ոչ ուշ, քան 15 օրուան ընթացքին։

Սահմանադրական Դատարանը յայտնեց, որ քանի որ ներկայացուած դիմումները կը վերաբերին նոյն հարցին, «Սահմանադրական Դատարանի մասին» սահմանադրական օրէնքի 41-րդ յօդուածին համաձայն՝ դիմումները միաւորուած են եւ պիտի քննուին նոյն դատական նիստին ընթացքին։ Նիստը տեղի պիտի ունենայ յունիս 26-ին, ժամը 11:00-ին։






Al★Nejmah
MIDDLE EASTERN SUPERMARKET
NOW OPEN
Սեփականատէր
Յարութ Միփան
Ընտանեկան բացառիկ գործառնութիւն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ
IN HOUSE
COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON
Սուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիրի հաց եւ իրաքեան սոմուն
Supermarket | Restaurantl I Bakery I Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ
PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga

## Մոնթրէալի մէջ տեղի ունեցաւ Ս. Յակոբ եկեղեցւոյ «Դրօ եւ Աննա Փիլիկեան» Շաբաթօրեայ վարժարանի 2025-2026 տարեշրջանի Ամավերջի հանդէսը



Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ «Դրօ եւ Աննա Փիլիկեան» Շաբաթօրեայ վարժարանի Ամավերջի հանդէսը տեղի ունեցաւ Շաբաթ, 6 յունիս 2026-ի առաւօտեան ժամը 11:00-ին, Ս. Յակոբ Ազգային վարժարանի «Բաստրմաճեան» Թատերասրահին մէջ:

Հանդէսը սկսաւ Հայաստանի եւ Ս. Յակոբ վարժարանի քայլերգներով, որմէ ետք Տիգրանակերտ խումբի աշակերտները բարի գալուստի խօսքերով հանդէս եկան:

Երաժշտութեան ուսուցիչ Յովսէփ Զաղլասեանի ղեկավարութեամբ, վարժարանիս աշակերտները երգեցին «Գարուն», «Հայոց Այբուբեն», «Արտուտիկ», «Կաքաւիկ» եւ «Տարուան չորս եղանակները» երգերը, մեծ խանդավառութիւն ստեղծելով սրահէն ներս:

Բեմ բարձրացան Վան եւ Էրեբունի խումբերու աշակերտները եւ իրենց վտիտ բայց ճկուն շարժումներով ներկայացուցին «Գլուխ, ուս ու մատիկներ» երգին պարը:

Անոր յաջորդեց արտասանութիւններու փունջ մը՝ Գարուն, Ամառ, Աշուն եւ Ձմեռ, որոնք յաջորդաբար ներկայացուեցան Սիս, Անի, Էրեբունի եւ Վան խումբերուն կողմէ:

Վարժարանիս աշակերտ Անթոնի Ֆարահ դաշնամուրի վրայ հմուտօրէն նուագեց Ա. Խաչատուրեանի Անտանթինօ կտորը, որմէ ետք խումբ մը աղջիկներ պարեցին «Ուզունդարա» պարը, իսկ տղաքը՝ «Արցախ» պարը, ղեկավարութեամբ տիկին Զեփիւռ Լուլուին:

Հասաւ հանդէսի ամենահետաքրքրական բաժինը՝ Թատերգութիւնը: Տիկին Սեդա Մանկասարեան Պալիոզեանի ղեկավարութեամբ, վարժարանիս աշակերտները վարպետօրէն ներկայացուցին «Տարուան չորս եղանակները», որուն մէջ մայր բնութիւնը իր չորս զաւակները հաւաքած կը զրուցէ անոնց հետ, մինչ չարաճճի քամին, որոտումն ու փոթորիկը կու գան ու կ'աւրեն ամէն ինչ, որ մայր բնութեան չորս զաւակները կառուցած էին: Մայր բնութիւնը կը յորդորէ ու կը քաջալերէ զիրենք, որ վերստին վերաշինեն այն ինչ որ քամին, որոտումն ու փոթորիկը քանդած էին, ընդգծելով համբերութեան, յարատեւութեան եւ համագործակցութեան արժէքը:

Թատերգութենէն ետք, անգամ մը եւս Տիգրանակերտ խումբի աշակերտները բեմ բարձրացան եւ ոգեւորութեամբ ներկայացուցին ուսումնական տարուան յիշարժան պահերը: Անոնք յիշեցին մեղուաբուծարան այցելութիւնը, Ղափամայի օրը, Կաղանդի հաւաքոյթը, թէ ինչպէ՛ս սորվեցան Սասունցի Դաւիթի դիւցազնավէպի ուսուցումը, Տեառնընդառաջի խորհուրդը, Պահքի եօթ շաբաթներն ու անոնց անունները, Զատկուան հաւաքոյթն ու հաւկթախաղը, Ապրիլեան եղեռնի յուշարձանի այցելութիւնը, Մայրերու օրուան առթիւ ծաղիկներու պատրաստութիւնը, Մայիսեան յաղթանակին նուիրուած տողանցքի մասնակցութիւնը եւ այլն:

Գեղարուեստական բաժինը շարունակուեցաւ, երբ Տիգրանակերտ խումբէն Լորի Քեսապլեան մեներգեց «Սարդարապատ» երգը, որուն ընկերակցեցան Կարօտ Արսլանեան եւ Յակոբ Ակոբեան:

Ապա խօսք առաւ վարժարանիս տնօրէնուհի տիկին Շողիկ Ազարիկեան Ադամեան: Ան բարի գալուստ մաղթեց բոլորին, յատուկ շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, որոնք անվերապահօրէն իրենց զաւակները վստահած են այս կրթօճախին, որ արդէն 65 տարիներէ ի վեր անխափանօրէն կը գործէ ու իր տաքուկ գիրկին մէջ կը հասցնէ սերունդներ, որոնք ամուր կառչած կը մնան իրենց արմատներուն, լաւ կը ճանչնան իրենց լեզուն, մշակոյթը եւ հաւատարիմ տէրն ու պահակներն են իրենց ինքնութեան:

Տնօրէնուհին յատուկ շնորհակալութիւն յայտնեց նաեւ Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ հովիւին, որոնք մշտապէս զօրավիգ կանգնած են Շաբաթօրեայ վարժարանին եւ ոչ մէկ ճիգ կը խնայեն անոր բարգաւաճման: Տիկին Ազարիկեան անդրադարձաւ նաեւ Ծնողական յանձնախումբին տարած աշխատանքներուն, որոնք տարուան ընթացքին իրենց մասնակցութիւնը բերին իւրաքանչիւր ձեռնարկի, որպէսզի յաջողութեամբ պսակուին անոնք:

Ան յատուկ շնորհակալութիւն յայտնեց նաեւ բոլոր նուիրատուներուն եւ հայ դպրոցին հաւատացող բոլոր բարերարներուն, որոնք անուղղակիօրէն իրենց ներդրումը կը բերեն վարժարանի բարգաւաճման:

Այնուհետեւ գնահատանքի յուշանուէրներ յանձնեց այն աշակերտներուն, որոնք շաբաթ մը առաջ մասնակցած էին Հայաստանի Ա. Անկախութեան նուիրուած տողանցքին:

Օրուան պատգամը փոխանցեց Տ. Գառնիկ Աւագ Քհն. Գոյունեան եւ իր խօսքին մէջ անդրադարձաւ ցուցադրուած տեսերիզին մէջ փեթակին ու անոր իւրաքանչիւր բջիջին մէջ գրուած աշակերտներու անուններուն մասին եւ հաստատեց, թէ իրապէս վարժարանիս աշակերտները կը նմանին մէկական մեղուներու, որոնք ամբողջ տարի մը աշխատեցան, սորվեցան, գրեցին, կարդացին ու երգեցին միշտ հայերէն: Հուսկ, Տէր Գառնիկը «Հայր Մեր» աղօթքով փակեց ձեռնարկը:

Հանդէսի աւարտին բոլոր ներկաները հրաւիրուեցան վարժարանիս խմբավայրը եւ հիւրասիրուեցան Ծնողական յանձնախումբին կողմէ պատրաստուած ուտելիքներով: Տեղի ունեցաւ նաեւ վիճակահանութիւն եւ վաճառուեցան Հայրերու օրուան առիթով յուշանուէրներ, պատրաստուած տնօրէնութեան կողմէ:

Ներկաները գոհունակութեամբ եւ շատ բարձր տրամադրութեամբ բաժնուեցան ու հաստատեցին, թէ Սեպտեմբեր ամսուան անգամ մը եւս պիտի հաւաքուին Շաբաթօրեայ վարժարանի հովանոցին տակ ու շարունակեն հայեցի կրթութեան եւ ազգային դաստիարակութեան գեղեցիկ ուղին:

**Շաբաթօրեայ վարժարանի Տնօրէնութիւն**

## Սեդա Թօփուզեան նշանակուած է Գանատայի քաղաքապետարաններու միութեան տնօրէններու խորհուրդի անդամ



Լաւալի քաղաքապետական խորհուրդի անդամ Սեդա Թօփուզեան նշանակուած է Գանատայի քաղաքապետարաններու միութեան Կառավարիչ մարմինի անդամ՝ ներկայացնելով Լաւալ քաղաքը համազգանատական մակարդակի վրայ: Միաժամանակ, ան պիտի ծառայէ որպէս Լաւալի միակ ներկայացուցիչը միութեան՝ Քեպէգի խմբակի գործադիր յանձնախումբին մէջ:

Թօփուզեան յայտնած է, թէ այս նշանակումը առիթ պիտի ընծայէ քաղաքապետական ղեկավարներու հետ համատեղ աշխատանք տանելու եւ բնակարանաշինութեան, ենթակառոյցներու, հանրային ապահովութեան ու կլիմայական մարտահրաւէրներու վերաբերեալ Լաւալի առաջնահերթութիւնները ազգային մակարդակով ներկայացնելու:

## ՀՅԴ ԳԵՄ-ի Մոնթրէալ-Լաւալի մասնաճիւղի անդամները այցելեցին Գանատայի խորհրդարան



ՀՅԴ ԳԵՄ-ի Մոնթրէալ-Լաւալի «Լեւոն Շանթ-Բեկոր Աշոտ» մասնաճիւղի անդամներու պատուիրակութիւն մը երկուշաբթի, յունիս 15-ին այցելեց Օթթաուա՝ մօտէն ծանօթանալու Գանատայի խորհրդարանական համակարգին եւ ժողովրդավարական կառոյցներուն:

Պատուիրակութիւնը հիւրընկալուեցաւ դաշնակցային երեսփոխան Ֆայսալ Էլ-Խուրիի կողմէ, որ հանդիպում ունեցաւ երիտասարդներուն հետ, քննարկեց զանոնք հետաքրքրող հարցեր եւ լուսաբանեց խորհրդարանի աշխատանքներուն մասին:

Այցելութեան ընթացքին ԳԵՄ-ի անդամները շրջայց կատարեցին Գանատայի խորհրդարանին մէջ, ներառեալ նիստերու մայր դահլիճը եւ խորհրդարանական յանձնաժողովներու սրահները: Անոնք նաեւ հետեւեցան խորհրդարանական բանավէճի մը՝ աւելի մօտէն ծանօթանալով օրէնսդրական գործընթացներուն, խորհրդարանական քննարկումներուն եւ երկրի քաղաքական օրակարգին վրայ գտնուող հիմնական հարցերուն: Այցելութիւնը երիտասարդներուն համար կարեւոր առիթ մը հանդիսացաւ՝ աւելի լաւ հասկնալու Գանատայի ժողովրդավարական հաստատութիւններու աշխատանքը եւ ընտրեալ ներկայացուցիչներու դերը երկրի ընդհանուր քաղաքականութեան ձեւաւորման մէջ:

## Տեղի ունեցաւ ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան վարիչներու վերաորակաւորման սեմինարը



Յունիս 5-7 շաբաթավերջին ընթացքին, Քեպէգի մէջ տեղի ունեցաւ ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան վարիչներու վերաորակաւորման սեմինարը, մասնակցութեամբ 34 վարիչներու եւ Ընդհանուր Վարիչ Մարմինին, որոնք ժամանած էին Քեպէգէն, Թորոնթոյէն, Գեմպրիճէն եւ Վանգուվըրէն: Սեմինարի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ ուրբաթ երեկոյեան: Դաստիարակչական ծրագրին մշակմամբ զբաղող ընդհանուր պատասխանատուն վարիչներուն բացատրեց սեմինարին նպատակը, անոնց բաժնեց թղթապանակներ եւ ներկայացուց սեմինարին օրակարգը:

Երեք օրերու ընթացքին, համագործակցութեան (team-building – ընկհ. Նորա Արուշեան), նախահաշիւի պատրաստութեան եւ նիւթականի կարգաւորման (budget planning – ընկ. Հայկ Վանլեան) եւ միութեան տարբեր մասնաճիւղերուն միջեւ հաղորդակցութեան ու նիւթերու յստակ բաժանումի (ընկ. Սերոբ Գարայեան/ընկհ. Արիանէ Թասլաքեան) գործնական աշխատանոցներուն զուգահեռ՝ վարիչները ունկնդրեցին դաստիարակչական դասախօսութիւններ: Անոնց փոխանցուեցան հետեւեալ նիւթերը. «Պատանիին տարիքային հանգրուանները» (ընկհ. Նորա Արուշեան), «Վարչակարգեր» (ընկ. Գրիգոր Դերձակեան), «Conflict Resolution» (ընկհ. Լորի Ապրաքեան), «Public Speaking» (պրն. Զաւէն Կէօնճեան) եւ «Ինչպէ՞ս ներգրաւել նոր պատանիներ» (ընկհ. Փաթիլ Եսայեան):

Զոյգ օրերու երեկոյեան, վարիչները մտերմիկ մթնոլորտի մը մէջ զրուցեցին իրարու հետ, խմբուեցան խարոյկին շուրջ, երգեցին ազգային-յեղափոխական երգեր եւ զուարճացան խմբային խաղերով: Շաբաթավերջի ընթացքին, վարիչները իրարու հետ խորհրդակցելով՝ կրկին անգամ նկատեցին, թէ ինչքան անհրաժեշտ եւ կարեւոր է իրենց խաղացած դերը՝ հայրենատէր սերունդի մը դաստիարակութեան հարցով եւ վճռեցին նոր թափով շարունակել իրենց առաքելութիւնը:

Կիրակի կէսօրէ ետք սեմինարը պաշտօնապէս փակուեցաւ, եւ բոլորը խանդավառ ու նոր գիտելիքներով զինուած վերադարձան իրենց շրջանները:

**ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութիւններու Ընդհանուր Վարիչ Մարմին**

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ կամ ՎԱՐԺԵՑՈՒՄ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ
## (Սփիւռքեան մտածողութիւն մը)

*ՎԵՐՋԱԲԱՆ*

*Սփիւռքահայ իրականութեան մէջ, ընկալումներու եւ դուրսին հետ յարաբերութեան ուղին կարելի չէ շարունակել աւանդական-կրկնողական մտայնութեամբ, խորհած է Քիւրքճեան, ինչպէս տեսանք։ Անկասկած, աւանդութիւնը կրկնողական ըլլալու սահմանուած երեւոյթ մը չէ, այլ ստեղծագործ փոխանցումներու կտակ մըն է, որ կրկնողական կ՛ըլլայ՝ երբ անատակութիւնը չի կրնար զայն հասկնալ իբր այնպիսին, չի կրնար իրը, նորը ստեղծել։ Աւանդութեան լաւագոյն «պահպանում»ը՝ անոր նորումն է (իր բառն է ասիկա)։ Աւանդական-կրկնողականով նկատի ունեցած է ակնարկեալ անատակութիւնը, որ ինքզինք փակած է եւ կը փակէ՝ չկարենալով, ուստի՝ չկամենալով կտակը ի գործ արկանել՝ ըստ իր նոր փորձառութիւններուն։*

*Իսկապէս սփիւռքահայ ընկալումները եւ դուրսին հետ յարաբերութիւնը ստիպողականօրէն այժմէական նկարագիր պէտք է ունենան։ Արդ, այս հաստատումը սերտօրէն առնչուած է «մշակութային ենթակայ»ին, որ մտաւորականն է։ Մշակութային ենթական, այսինքն՝ ան որ տէրն է աւանդութեան մը՝ կը գործէ։ Երբ մտաւորականը «մշակութային ենթակայ» կոչած է, ըսել ուզած է, թէ ան առաջին տէրն է աւանդութեան, կամ՝ անոր զարգացման առաջին մշակը։*

*Քիւրքճեան փորձած է սահմանել սփիւռքահայ մտաւորականին «իրական, փորձնական կենդանագիր»ը։ Ըստ իրեն, սփիւռքահայ մտաւորականը ան է, որուն իմացական աշխարհին մէջ ժառանգեալ մշակոյթը տուեալ մըն է եւ կարելիութիւն մը. անիկա ապրող երեւոյթ մըն է, առօրեայ, «ներկայ իրականութեան մը յղուող»։ Սփիւռքահայ մտաւորականը կոչուած է ըլլալու «համադրումի գործօն», որ իր ստանձնած մշակոյթը կը համադրէ այլ մշակոյթներու հետ։ Թիւր պիտի ըլլար կարծել, թէ անոր «համադրումի գործօն» ըլլալը՝ լոկ կը նշանակէ սեփականը եւ այլ մշակոյթները քով քովի դնող մը ըլլալ։ Քիւրքճեան անոր կից գործածած է «նորումի գործօն» բացատրոյթը։ Հետեւաբար՝ սփիւռքահայ մտաւորականին համադրումը այնպիսին պիտի ըլլայ, որ աւանդականը նորնայ։ Անոր դերը որպէս ենթակայ եւ պատասխանատու աւանդութեան փոխակերպման՝ կը գործէ զայն պատշաճեցնելով նոր պայմաններուն, ըստ անոնց նոր կշռոյթին։*

*Սփիւռքահայ մտաւորականի այս «կենդանագիր»ը այնքան կը յարմարի Յ. Քիւրքճեան մտաւորականին։ Իր արտայայտած բոլոր միտքերը՝ «ամենօրեայ ներկայի մը բաբախումով» ապրուեցան, եւ գործի վերածուեցան իր կողմէ։*

*Իր «Հանգրուանի Մը Նոթերէն» յօդուածին մէջ, որ գրած է պատասխանելու համար իրեն ուղղուած հարցումի մը, թէ ինք եւ իր սերնդակիցները իրենց ճիգով եւ լարումով՝ ի՞նչ ելքի եւ արդիւնքի հասան, վերաքաղ մը կատարած է, եւ պատասխանած։*

*Յիշած է, թէ իրենք կ՚ապրէին «ներիմացումը նոր տեսիլքի մը, եւ իրենց մէջ «արդէն կ՚ուրուագծուէր մերժումը Արեւելք/Արեւմուտք, հայապահպանում/ձուլում մանիքէական երկուութեան»։ Ասիկա «խախտում» մըն էր տիրող կարծրատիպային պատկերացումներու. «խախտում» մը՝ որ միաժամանակ կը դիտարկէր Արեւմուտքի հայածին նոր սերունդէն անոնք՝ որոնք հայութեան կապուած շերտ մըն էին։ Իրենք ճանչցած էին ֆրանսահայ, ամերիկահայ տարեկիցներ, որոնց մէջ տեսած էին հոգեւմտաւոր բացութիւն մը, «չըսելու համար՝ վառ հետաքրքրութիւն» մը՝ հանդէպ «հայեցիութեան ոլորտին»։ Անոնք բարդոյթներէ զերծ էին, եւ անոնց «գործնական կամ ակադեմական-տեսական տրամադրելիութիւնը»՝ թելադրիչ էր «անհուն կարելիութիւններու»։ Ինք ափսոսացած է, որ միջին-արեւելեան գաղափարաբանական կեթոն՝ այն կարելիութիւնները անտեսած էր, ուստի եւ՝ մսխած։ Սակայն հաւատացած էր, թէ տակաւին «փրկելի» էին կարելիութիւններ՝ «այս կամ այն համեմատութեամբ»։ Փրկելի՝ վասն համահայկական որակի կայացման։ Եւ կայացող որակը՝ մարդկային որեւէ համայնքի, նաեւ համայնութեան համար կենսական է։*

*Ի՞նչ կրցան ընել ինք եւ իր սերնդակիցները «երազուած», «սպասուած» Սփիւռքը կայացնելու համար։ Բայց ի՞նչ կարելի էր ընել «կիսակառոյց Սփիւռքի մը մէջ»։ Երբեմն խորհած է, թէ միայն կարելի է ձգտիլ «փակ, փոքրաթիւ հոգեմտաւոր հարազատներու համայնքի մը»։ Եւ երբեմն ալ չէ հրաժարած «հոգեմտաւոր հարազատներու համայնք»է մը անդին՝ կարելիութիւններու «ներիմացում»էն, այսինքն՝ երազէն եւ սպասումէն, որ ընդհանրական յանձնառութեան տեսիլքը պիտի կերպարանաւորուի, ծնունդ տալով որակաւոր համայնութեան մը։ Քիւրքճեան իր իսկ փորձառութեամբ՝ «ներիմացում»ը ըմբռնած է ոչ իբր ինքնախաբէութիւն, այլ՝ գրեթէ իբր ստուգութիւն. ըստ որուն՝ նոր գաղափարները անզգալիօրէն եւ աստիճանականօրէն կը թափանցեն թէ՛ հաստատութենական «միջնաբերդեր»է ներս, եւ թէ՝ անհատներու մտաշխարհներուն, եւ կ՚առաջնորդեն աւանդութիւնը նորելու, եւ նորելով՝ իբր կառոյցներ, իբր անհատներ եւ իբր ինքնութիւն նորնալու։*

*Կը խորհիմ, որ իր մօտ աւելի կշիռ ունեցած է համայնութեան վերականգնումին տեսիլքը։ Յ. Քիւրքճեան դրականօրէն ապրեցաւ, թէ՛ մտքով, թէ ալ՝ գործով։ Արդ, իր օրինակը կ՚ըսէ, թէ սփիւռքահայ մտաւորականին դերը՝ չյանձնուիլն է իր կասկածներուն, այլ հաւատք ունենալն է ընդհանրական յառաջընթացին համար նոր գաղափարներու ներգործիչ եւ վերականգնիչ ուժին...։*

ԳԱՌՆԻԿ Աւ. Ք. Գ.
(Վերջ)

## Երկու այրող հրամայականներ ընտրութիւններու վաղորդայնին

*(Ա) Անկախ իշխանական դաշտի ընտրակեղծիքներէն, որոնք ամէն օր աւելի կը բացայայտուին, այնուամենայնիւ անուրանալի է, որ Փաշինեանի ստացած քուէներու կազմախօսութեան յստակօրէն մաս կը կազմէ «համակրական» քուէի կարեւոր շերտ մը։ Խօսքս չի վերաբերիր աշաբեկեալ քուէին։ Յայտնօրէն ՀՀ քաղաքացիներու խաւ մը կայ, որ բացէ ի բաց կեցած է այս յանցագործ իշխանութեան կողքին։ Անկասկած ասոնք այն մարդիկն են, որոնք անձնապէս նպաստաւորուած են (կամ շլացա՛ծ) փաշինեանական համակարգի «բարիք»ներէն։ Մէկ մասը՝ իշխանութեան հետ ուղիղ շահակցութեան դիրքերէ եւ մէկ կարեւոր մասն ալ՝ յոյսեր կապելով Փաշինեանի եւ իր արեւմտեան հովանաւորներուն յօրինած սուտ խոստումներուն։ Կարեւորը, սակայն, այն է, որ «համակրական» այս շերտը – որքան ալ՝ առայժմ փոխտ... մեծ նշանակութիւն ունի վիշխական այս իշխանութեան ապագային համար։ Ան չէ ծնած քաղաքական գործընթացի բնականոն առճակատումներէն։ ԱՆ ՍՏԵՂԾՈՒԱԾ Է ՅԱՏՈՒԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ ԹՈՒՐՔԵՒԱՏՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ԹՇՆԱՄԻԻՆ, ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ՈՒԺԵՐՈՒՆ ԵՒ ՓԱՇԻՆԵԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՔՆԱՍԵՆԵԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ։ ԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԱԾ Է ՅՍՏԱԿ ՆՊԱՏԱԿԻ ՄԸ ՀԱՄԱՐ։ ԱՆԻԿԱ ԹԱՆԿԱԳԻՆ ԽԱՐԻՍԽ ՄԸՆ Է, ՈՐՈՒՆ ՎՐԱՅ... ԱՆԿԱՍԿԱ՛Ծ... ՄԵԾ ՆԵՐԴՐՈՒՄ ՊԻՏԻ ԸՆԵՆ ՓԱՇԻՆԵԱՆՆ ՈՒ ԻՐ ՀՈՎԱՆԱՒՈՐՆԵՐԸ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ ԶԱՅՆ ՏԵՒԱԲԱՐ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՎ, ԶԱՅՆ ԲԵՒԵՌԱՑՆԵԼՈՎ, ԶԱՅՆ ԸՆԴԼԱՅՆԵԼՈՎ ԵՒ ԶԱՅՆ ՎԵՐԱԾԵԼՈՎ ԵՆԻՋԵՐԻԱԿԱՆ ՏԻՊԻ ԱՊԱԶԳԱՅԻՆ ՈՒԺԻ ՄԸ ՀԱՅ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԷՍ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱԴՐՈՒԹԵԱՄԲ։*

*Պարզ խօսքով, թշնամիին ծրագիրն է կազմաքանդել հայ անկախ պետականութիւնը ՀՀ քաղաքացիի՛ն իսկ ձեռքերով։ Հետեւաբար ընդդիմութեան մեծ խնդիրն է վճռակամութեամբ դիմագրաւել այս մեծ մարտահրաւէրը եւ պաշտպանել մեր ժողովուրդը հասարակութեան այս ախտին դէմ։ Այս առումով, ընդդիմութիւնը դուրս եկած է այս ընտրութիւններէն լծակային կարեւոր առաւելութեամբ մը։ Ան փակած է ճամբան փաշինեանական համակարգի միահեծան գործունէութեան, անոր գլանալով երեք հինգերորդի մեծամասնական շեմը։ Հետեւաբար այսօր կը մտնենք պայքարի մէկ նոր փուլ ընդդիմութեան ձեռքերուն մէջ ունենալով այս կարեւոր ուժականութիւնը։*

*Աւելցնենք անմիջապէս, որ այս ուժականութիւնը դեռ պէտք է ամրագրուի ընդդիմութեան ուժերու կուռ միասնականութեամբ եւ քաղաքական կամքով։ Քաջ գիտնալով, որ այս զէնքը զէնք չէ, եթէ ան դատապարտուած է զինարանին մէջ մնալու։ ՀՀ Կեդրոնական ընտրական յանձնաժողովը կը խոստանայ քուէներու վերահաշուարկի արդիւնքները հրապարակել Յունիսի 14-ին։ Հրամայական է, կենսակա՛ն է, որ անմիջապէս ձեւաւորուի ընդդիմութեան միասնական ղեկավարութիւնը, եւ այս վերջինը մեծ ուժականութեամբ դիմագրաւէ այս թուականը։*

*(Բ) Նկատի առնելով իրերու այս բարդ դրութիւնը՝ կարեւոր է, որ անգամ մը եւս լուսարձակի տակ առնուի խնդրայարոյց այն իրողութիւնը, որ ՀՀ ընդդիմադիր դաշտը ընտրութիւններուն ներկայացաւ կոտորակուած կազմախօսութեամբ։ Ընդդիմութեան առաջատար ուժերը – թէեւ քաղաքականօրէն մէկզմէկու համադիր – այնուամենայնիւ չկարողացան միացեալ թեկնածուով ներկայանալ ընտրական դաշտին։ Անոնք չկրցան արդէն իսկ ապակողմնորոշուած եւ անկայուն ՀՀ ընտրազանգուածը հզօր եւ գործօն համախոհութեամբ (active consensus) ուղղորդել դէպի այն միակ անմիջական նպատակը, որ փաշինեանական համակարգի ամբողջական լուծարումը պէտք էր ըլլար բոլորին համար։ Այդպէս չեղաւ եւ այդ բանը բնականաբար ժխտական անդրադարձ ունեցաւ ընդդիմութեան ընտրական կարելիութեանց վրայ։ Պէտք է աւելցնեմ, որ «Հայաստան» դաշինքի գլխաւոր թեւը հանդիսացող իմ կուսակցութիւնս՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, հետեւողականօրէն կանգնած էր, եւ է՛, Հայաստանի քաղաքական դաշտէն փաշինեանական չարիքը անհետացնելու առաջադրութեան վրայ։ Հետեւաբար՝ առաւել հարուածային եւ միասնական կարողականութեամբ պայքարի դաշտ իջնելու անհրաժեշտութեա՛ն վրայ։ Պէտք է իսկապէս խոշորացոյցի տակ առնել այն ճակատագրական բացը, որուն կ՚ակնարկեմ։ Եւ հասկնալ բնոյթը ընդդիմութեան այս ձեռնթափութեան։ Մէկ բան յստակ է։ Միասնականութեան նմանօրինակ բացը կարելի չէ ընդունիլ այլեւս որեւէ պատճառաբանութեամբ։ Պէտք է նաեւ ջանալ հասկնալ, թէ ինչո՞ւ ընտրական դաշտէն դուրս պահեց ինքզինք նախագահ Սերժ Սարգսեանի գլխաւորած Հանրապետական կուսակցութիւնը։ Ի՞նչ բան իրագործելու համար էր այդ որոշումը եւ ի՞նչ բան իսկապէս իրագործեց։ Ինչպէս ըսի, յառաջիկայ տարիները մեծ պատասխանատուութիւն մը կը դնեն ընդդիմութեան ուսերուն։ Առաջին հերթին՝ իսկական եւ առաւել հզօր եւ միասնական ընդդիմութիւն մը ըլլալու պատմական պատասխանատուութի՛ւնը։*

*Ղեկավարողի եւ ղեկավարուողի փոխ-յարաբերութեան մէջ առաւել ճակատագրականը ղեկավարողի դերն է եղած միշտ։ Եթէ այդպէս չըլլար, մենք չէինք ունենար Սարդարապատ։ Ընդդիմութեան աւագ պարտաւորութիւնն է այսօր ըլլալ արժանի ղեկավարը այս բարդ առճակատման։ ԸԼԼԱԼ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱ՛ՆԸ ՆՈՐ ՕՐԵՐՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐԻՆ ԵՒ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ ԶԻՆԵԼ ՀԱՆՃԱՐԵՂ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՄԲ։ Հարկ կա՞յ յիշեցնելու, որ Վեհիպ փաշայի ուժերը կրկին կեցած են սահմանին։ Եւ կեցած են նոյն ամբարտաւանութեամբ եւ Հայաստանն ու հայութիւնը բնաջնջ ընելու նոյն ոճրային ախորժակներով։ Եւ այս կենաց-մահու սպառնալիքին անսակարկ ընդառաջ երթալու պարտաւորութիւնն է, որ այժմ կը ծանրանայ բոլոր ազգային ուժերու ուսին։*

ԿԱՐՕ ԱՐՄԷՆԵԱՆ

### ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

«Հորիզոն»ի խմբագրակազմը ի սրտէ կը շնորհաւորէ տարիներու աշխատակից Լորի Խաչերեանն ու իր ամուսինը՝ Մարտիկ Յակոբեանը, դուստրով մը (Թալիա) բախտաւորուելնուն ուրախ առթիւ։

Voyages HAIG Travel
Ձեր բոլոր ճամբորդական կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676
ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼԱՒԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ
*Նոր Հասցէ՝
Voyages Haig Travel
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2
PERMIS DE QUÉBEC
Tel: + 1 514-284-7676
Email info@haigtravel.ca

horiZon
ARMENIAN WEEKLY
VOL. 32 No. 5-6 (1599-1600) JUNE 29 - JULY 6, 2026

# Constitutional Court will hear opposition election dispute

YEREVAN—Armenia's Constitutional Court on June 21 announced that it will convene a hearing on June 26 to review the petitions of seven political forces that are disputing the result of the June 7 Parliamentary Elections.

On June 19, six opposition groups and one pro-government party petitioned the Constitutional Court to invalidate the official results of the June 7 parliamentary elections that gave victory to the ruling Civil Contract party.

In their separate appeals, they all alleged serious fraud which they said influenced the election outcome.

The three main opposition contenders—the Strong Armenia Alliance, the Armenia Alliance and the Prosperous Party of Armenia—accused election officials of miscounting many ballots and claimed that the authorities forced many public sector employees and security personnel to vote for Civil Contract. They also pointed to mass arrests of their members and supporters, which continued on Election Day.

The other parties that submitted separate appeals were the Wings of Unity party; the Democracy, Law, Discipline party; Alliance of Defenders of Democracy for the Republic party; and the "New Power" Reformist Party.

Considering that the aforementioned cases concern the same matter, in accordance with the law on the Constitutional Court of Armenia, these cases have been joined and will be examined at the same court session, which will take place on June 26.

For this hearing, the Constitutional Court has requested that the Central Election Commission to submit the decision adopted on the election results, the minutes on the voting results, court rulings, decisions adopted as a result of the consideration of applications (complaints) received by the election commissions, decisions of territorial election commissions on violations recorded on voting day in the registers of precinct election commissions, and decisions adopted on the voting results.

In addition, the Court also has requested the Prosecutor General's Office, the Anti-Corruption Commission, the Investigative Committee, the Internal Affairs Ministry and the Television and Radio Commission to submit information on any election-related matters.

The court also decided that the ruling Civil Contract party will act as a third party in these proceedings.

Attorney Hovhannes Khudoyan, who represents the Armenian Alliance in the Constitutional Court, told Azatutyun. am that an application will be filed with a higher court to have Judge Seda Safaryan's participation in the trial be inadmissible, on the grounds of bias.

Safaryan was included in the list of the "Alliance of Democrats" in the 2021 parliamentary elections. Arman Babajanyan's "For the Republic" party is also appealing the election results in the Constitutional Court, and in 2021 Babajanyan was in the same alliance with Safaryan.

The Constitutional Court also decided that justices Vladimir Vardanyan and Artak Zeynalyan will not participate in the hearing, since they "have biases" toward the parties to the trial.

Vardanyan was transferred to the Constitutional Court from the parliament where he was a representative of the "Civil Contract" faction, and Artak Zeynalyan, before being elected judge, was a member of Aram Sargsyan's "Republic" party, which holds seats in the Yerevan City Council.

# AYF members visit Parliament Hill

OTTAWA — A delegation representing members of the Armenian Youth Federation Montreal-Laval "Levon Shant-Pegor Ashod" Chapter visited Ottawa on June 15, for an educational trip focused on Canada's parliamentary system.

The group was hosted by MP Fayçal El-Khoury of Laval—Les Îles, who met with the delegation to discuss issues of interest and provide insight into Parliament's work.

During the visit, the participants toured the Parliament of Canada, including the House of Commons and committee rooms. They also attended a parliamentary debate, where they learned more about legislative procedures, parliamentary deliberations, and key issues currently on the national agenda.

# Seta Topouzian appointed to FCM

LAVAL —City Councillor Seta Topouzian has been appointed to the board of directors of the Federation of Canadian Municipalities (FCM), giving the City of Laval representation at the national level within the organization that advocates for more than 2,000 municipalities across Canada.

Topouzian also announced that she will serve on the executive committee of the FCM's Quebec caucus as Laval's sole representative. She said the appointment provides an opportunity to ensure the city's priorities and challenges are heard on issues including housing, infrastructure, public safety, and climate change.

# Armenia's 2026 election: Between geopolitical rivalry, domestic fear and the search for an Armenian strategy

BY RAFFY ARDHALDJIAN[*]

As Armenia emerged from its pivotal June 7, 2026 parliamentary elections, citizens felt that their vote represented an existential choice for the country's strategic alignment. With a voter turnout of approximately 59 percent (the highest rate seen since 2017) voters handed Prime Minister Nikol Pashinyan's Civil Contract party a victory with 49.7 percent of the vote. This outcome grants them a 64-seat majority in the 105-seat legislature, including ethnic minority mandates.

The opposition's Samvel Karapetyan's Strong Armenia alliance finished second with 23.3 percent (29 seats), followed by former President Robert Kocharyan's Armenia alliance at 9.9 percent (12 seats). While all three political forces comfortably passed the legal threshold to enter the National Assembly, it remains unclear whether the two opposition alliances will choose to boycott parliament or follow through on their pledges to challenge the finalized results in court.

While the parliamentary election was "procedurally sound," the resulting mandate seemed deeply flawed, tainted by a highly distorted, polarized, and coercive political environment, as my colleague Hrair Balian argues in his recent Modern Diplomacy article. As Greg Sarkissian recently noted, Armenia's political debate should move beyond questions of patriotism and simplistic geopolitical labels. The 2026 election was not merely a contest between parties, but a reflection of two forces — geopolitical rivalry and fear — that obscure the absence of a coherent Armenian-centred national strategy. The discussion below explores the broader geopolitical forces and voter anxieties that helped shape the election.

## GEOPOLITICAL RIVALRY

Against the backdrop of structural shifts in the global order, Armenia's 2026 legislative elections took place amid heightened geopolitical competition in the South Caucasus. The electoral cycle highlighted a profound domestic anxiety regarding the preservation of democratic institutions, national security, and sovereign identity during a protracted post-Soviet transition. While foreign powers aggressively used public endorsements and diplomatic threats to influence the incumbent administration, their deeper strategic objectives remained concealed beneath standard rhetoric. This regional environment was further strained by the volatile de-escalation of the U.S.–Iran conflict, which shifted the local balance of power.

Russia continues to seek to preserve its traditional influence in the former Soviet space, using security dependence and information pressure to warn Armenians against a decisive turn toward the West. In the run-up to the vote, Russian officials and state-aligned outlets repeatedly cast Pashinyan's pro-Western course as a risk to Armenia's security and economic stability. As highlighted by Radio Free Europe/Radio Liberty, this pressure culminated at the May 2026 Eurasian Economic Union (EAEU) summit in Astana. Russia, Belarus, Kazakhstan, and Kyrgyzstan issued a joint statement via Sputnik, warning that Armenia's EU integration created "significant risks" to economic security, paving the way for a formal review to suspend Armenia's membership benefits.

Neo-Ottoman Turkey and Azerbaijan (backed by Pakistan in select diplomatic and security domains) continue to push a regional order built around new transportation and energy corridors, including potential routes through Armenia's Syunik region (the Turan route in their view), with both powers signalling that ongoing negotiations and de-escalation are likelier to progress under the incumbent Armenian government.

Meanwhile, the European Union, whose relations with Moscow have been fractured since the 2022 invasion of Ukraine, sought deeper engagement in the South Caucasus. By holding high-level meetings in Yerevan and publicly embracing Armenia's European trajectory just weeks before the vote, EU leaders underscored their preference for continuity in Pashinyan's policy line. Though Armenian political discourse often cites a "collective West," the reality is more nuanced: Washington and Brussels frequently cooperate, yet their long-term interests diverge. While both actors seek to secure access to Central Asian rare earth minerals, develop Caucasus transport & energy routes that circumvent Russia and Iran, and tacitly back the incumbent administration ahead of the elections, their primary strategic objectives differ. The United States views Armenia largely through a geopolitical lens as a transit corridor to bypass regional rivals, whereas the EU, in the long run, aims to structurally integrate Armenia into its economic, legal, and regulatory framework.

Iran, despite recent strain from conflicts with Israel and the US, emerged from a confrontation with the world's most powerful military having not only survived, but with some favourable circumstances. It remains a key regional actor viewing South Caucasus developments through the lens of national security. Tehran has repeatedly warned against changes to Armenia's southern border, maintaining its role as a potent factor in the regional balance. In the run-up to the June 2026 elections, this concern deepened into acute anxiety over the US-Armenia agreement on the TRIPP transit corridor through Syunik, which Iranian officials and state media aggressively framed as a Western geopolitical maneuver designed to oversee Iran's northern border and sever its direct boundary with Armenia. Consequently, while maintaining formal diplomacy with the government, Tehran exerted rhetorical pressure on the electorate by amplifying opposition arguments that Pashinyan's pro-Western peace course invited dangerous foreign rivalries at the direct expense of Armenian sovereignty.

[...] Ultimately, none of these actors are neutral; each is driven by its own specific interests and preferred outcomes. Each relies on a different mix of security ties, economic leverage, and narrative influence to shape Armenia's choices.

As geopolitical competition intensified, Armenia's elections became increasingly entangled in the strategic rivalry of larger powers. Political messaging, media narratives, diplomatic signalling, and information campaigns sought to shape how Armenians understood both the threats facing the country and the choices available to address them. The result was a political environment in which voters were often encouraged to choose between competing geopolitical alignments rather than engage in a deeper discussion about what serves Armenia's long-term national interests. In the case of a small state situated at the crossroads of rival empires, this may be the most subtle form of external influence: not determining how its citizens vote, but shaping the framework through which they interpret their choices.

## POLITICS OF FEAR

Beyond the rivalry of empires, the second major factor shaping the election was fear. Armenian voters went to the polls after years of frontline violence, devastating territorial losses, the total displacement of the population of Artsakh, economic uncertainty, and persistent existential threats to the republic's remaining borders. In such an environment, fear became a powerful force in political mobilization, weaponized by external powers and local political participants alike.

On May 10, Azerbaijani President Ilham Aliyev directly intervened in Armenia's political discourse, warning that "it is the Armenian people who will suffer" if any candidate other than Pashinyan came to power.

On one side, the incumbent administration anchored its campaign on the fear of an immediate, catastrophic war. By presenting normalization efforts and border adjustments with Azerbaijan as the only path to survival, the ruling party implicitly messaged that any disruption to the status quo would trigger an instant, overwhelming invasion. Opposition factions were collectively framed as a reckless, war-mongering front whose ascent to

Continued on page E2

## A Mari Usque Ad Mare

### CANADA INVESTING TO STRENGTHEN CANADIAN CULTURE AND ENSURE CANADIAN CONTENT REMAINS AFFORDABLE

In a recent press briefing made by Marc Miller, Minister of Canadian Identity and Culture and Minister responsible for Official Languages, on behalf the Canadian government, a federal investment of $600-million per year was announced that will help Canada's audio and audiovisual sector with immediate support. This investment will be able to provide the stability and support that they need to keep culture accessible and affordable for Canadian across the country. Federal investments like this will ensure that all Canadian creators, producers and broadcasters have the necessary financial support they need. Additionally this investment will provide the resources to support strong French-language production as well. The minister is also directing the CRTC to review its recent decision on regulating online streamers and Canadian broadcasters, suggesting the government wants to reassess whether the current approach is fair, effective, and in line with its broader cultural goals.

"Canadians should be able to see themselves in the films and series they watch and hear their lives reflected in the artists they listen to. That's why we are investing to support the audiovisual and audio sectors now, while bringing necessary stability as we develop new directions that will ensure Canadian content remains affordable and that our stories continue to shape our identity and how the world sees us," said Minister Miller.

### FEDERAL GOVERNMENT INVESTING IN A NEW COMMUNITY HUB IN MONTREAL

In a recent press briefing made by Rachel Bendayan, MP for Outremont and Parliamentary Secretary to the Prime Minister, along side Marilou Hudon-Huot, Vice President, Development and Leasing at the Société de développement Angus, a new $11.3-million federal investment was announced that will help the development of a new inclusive and accessible community hub. This community hub will provide all the essential services that the community requires, while simultaneously strengthening support for local organizations. This investment will be funded through the Green and Inclusive Community Buildings Program.

"I am very happy and deeply moved to announce that our federal government will invest over $11.3 million to ensure the long-term viability of the Alexis-le-Trotteur daycare centre and create a new community hub in the heart of the Mile End. This project will preserve an institution that has been dear to Mile End families for over 40 years and will provide the community with a modern, accessible, and sustainable space where residents can come together, build connections, and support one another," said MP Bendayan.

Christian Yaccarini, President and CEO at the Société de développement Angus said, "This community centre project emerged in a context of real estate pressure and the weakening of community uses. The Centre de services scolaire de Montréal's (CSSDM) decision to divest itself of the building housing the Alexis-le-Trotteur daycare centre, which has been in the neighborhood for over 40 years, gave us the opportunity to acquire it, ensuring that it remains on the premises while allowing us to develop a community centre to meet the needs of the area. We are very grateful for the efforts made by the Honourable Rachel Bendayan and her team in securing this funding."

### GOVERNMENT OF CANADA PROTECTING CANADIAN TRANSPORTATION COMPANY

In a recent press briefing, François-Philippe Champagne, Minister of Finance and National Revenue, announced a new $90-million loan assistance for transportation and logistics company C.A.T. North America Inc. (C.A.T.) through the Large Enterprise Tariff Loan facility. The Large Enterprise Tariff Loan (LETL) facility is a financing facility announced by the Government of Canada. It is managed by the Canada Development Investment Corporation (CDEV) through its subsidiary, Canada Enterprise Emergency Funding Corporation (CEEFC), and provides financing support for large Canadian enterprises affected by actual and potential new tariffs.

This new loan will help C.A.T. North America Inc., one of Canada's major transportation and logistics employers, maintain its operations, protect critical Canadian jobs, and preserve crucial transportation capacity while also ensuring that they continue to their reliability in the supply chain. C.A.T. North America Inc. currently employs 1,670 workers in Canada and has a fleet of over 1,500 power units and 5,000 trailers, that serves customers in manufacturing, industrial, and retail sectors all across the country.

"Our government takes action to support Canadian companies impacted by ongoing trade disruptions. C.A.T. plays a key role in Canada's economy by ensuring businesses move goods efficiently across North America. This support will help this major transportation and logistics employer continue delivering for Canadian businesses while maintaining critical transportation capacity and protecting jobs," said Minister Champagne.

**ISHKHAN GHAZARIAN**
*Local Journalism Initiative Reporter*

## ARMENIA'S...

continued from page E1

power would nullify fragile diplomatic progress and plunge an unready nation back into conflict. For a population exhausted by near-continuous front-line losses, this narrative transformed the ballot into a raw choice between an imperfect, painful concessionary peace or total physical destruction. At the same time, the government portrayed itself as defending Armenia's sovereignty against Russian interference, while arresting numerous opposition figures and accusing various political actors of participating in destabilization efforts.

Conversely, the main opposition alliances countered by stoking fears that the ruling party was orchestrating a slow, piecemeal surrender of the state. They aggressively attacked the government's normalization agenda and regional transit initiatives (specifically the May 2026 TRIPP corridor agreement), framing them not as a path to peace, but as a dangerous framework that surrendered vital land and economic control to foreign interests. A central pillar of the opposition campaign warned that Pashinyan's policies would ultimately permit the mass resettlement of Azerbaijani citizens within Armenia, permanently altering the country's demographics. Furthermore, by alignment with the leadership of the Armenian Apostolic Church, the opposition argued that the administration's pro-Western course was actively erasing Armenia's national history and cultural identity to appease a hostile, pan-Turkic regional alliance.

As a result, many Armenians were not presented with a hopeful choice between competing national visions, but rather with two competing fears: fear of renewed war on one hand, and fear of gradual national decline on the other. The election thus became less a contest over Armenia's future potential than a referendum on which danger voters considered most immediate and most credible.

### THE MISSING ARMENIAN STRATEGY

Amid growing rivalry between external powers, Armenian political discourse has become increasingly polarized between competing geopolitical orientations: pro-Russian, pro-Western, and more recently, a vision centred on normalization with Turkey and Azerbaijan. Missing from much of this debate is a serious discussion about how Armenia can realistically navigate this environment.

This shortcoming is not limited to the incumbent government. The opposition has also largely failed to articulate a convincing approach for dealing with great-power competition without becoming overly dependent on one external power or another.

The deeper problem is that Armenian political debate is too often framed as a choice between rival centres of power rather than a discussion about Armenia's own priorities. Throughout much of Armenian history, survival depended on navigating between larger empires. Proponents of the incumbent administration argue that its current diplomatic pivot represents a conscious break from this cycle. Yet simply shifting dependence from a traditional regional patron to Western economic and regulatory frameworks risks repeating the same pattern. True endurance requires moving beyond the habit of choosing an external protector, toward internal institutional capabilities and an independent national strategy.

The central challenge is not choosing between East and West, Russia and Europe, or confrontation and accommodation. It is developing the political thought, leadership, and institutions necessary to define Armenian interests independently and pursue them consistently. The greatest weakness revealed by the 2026 election may not be foreign influence or political polarization, but the absence of a broadly shared Armenian vision capable of rising above the binary choices presented by both domestic politics and external powers.

### CONCLUSION

Armenia's 2026 elections show the difficult position of a small nation caught between the global plans of larger states. While local issues mattered, the election environment was weighed down by the strategic goals of foreign powers and the anxieties of an exhausted public. The fear of immediate war on one side or slow national decline on the other narrowed the political debate.

The immediate aftermath of the vote has only sharpened the domestic crisis. Because the ruling party failed to win a two-thirds supermajority, the political landscape has shifted from a standard electoral contest into a deep battle, with the incumbents wielding state institutions against their opponents. The government has responded with aggressive legal and administrative actions against major opposition figures, prompting six opposition parties to unite in rejecting the results.

This bitter internal warfare paralyses Armenia at the exact moment it needs unity. A country consumed by existential domestic battles cannot build the internal stability required to resist outside pressure. To break this cycle of vulnerability, Armenia must look inward, build resilient state institutions, support independent media, and shape a unified strategy centred on its own needs.

**) Raffy Ardhaldjian is a Fletcher School graduate and advisor to tech companies, public institutions, and NGOs. In his spare time, he writes about strategic topics spanning Armenia and the Armenian Diaspora.*

Ascenseur Adams Elevator
Services Inc.
